Աղբյուրը, որից պիտի ուժ առնենք, սոցիալական շարժումն է

Սերգեյ ԱՎԱԳՅԱՆ
«Միաբանություն» արհմիության նախագահ, ՀՀ Գերագույն խորհրդի պատգամավոր

Զգաբնակչության հիմնական զանգվածը այսօր հայտնվել է աղքատության ճիրաններում: Մի կողմից համապարփակ դեֆիցիտը, գործազրկությունը, տնտեսական հգնաժամը, բնակարանային ապահովման, ուսման, սպասարկման և այլ ոլորտներում կուտակված հիմնախնդիրները, մյուս կողմից իշխանությունների անգործությունը հանգեցրել են հասարակության շերտերում սոցիալական լարվածության ուժեղացմանը, բացահայտ դժգոհությունների աճին: Տխուր է, բայց՝ իրողություն, որ մարդիկ ավելի շատ միտված են երեկվան, քան՝ վաղվան: Սա, իմ կարծիքով, հղի է սոցիալական պայթյունի անխուսափելիության վտանգով, որի հետ չի կարելի հաշվի չնստել:

Ի՞նչ է հարկավոր անել: Նախևառաջ անհրաժեշտ է գիտակցել, որ սկսված ժողովրդավարական գործընթացների հետդարձի ճանապարհը ականապատված է, ուստի հետընթացը կործանարար է, այն կհանգեցնի քաղաքացիական պատերազմի: Երկրորդ, պետք է ոտքի կանգնեցնել ջլատված տնտեսությունը՝ բոլոր ոլորտների ստնտուն: Կունենա՞նք աշխատող տնտեսություն՝ կհասնենք ցանկալիին, չե՞նք ունենա՝ ոչ մի բընագավառում հնարավոր չի լինի հարց լուծել: Ցավոք, մեր ներկայիս տնտեսությունը աշխատել չի կարող, որովհետև այն հնի իներցիոն շարունակությունն է: Եվ, վերջապես, հարկավոր է ժողովրդի լայն զանգվածներին ներկայացնել այն արժեքները, որոնք մնայուն են և կդրվեն առաջիկա տնտեսական հարաբերությունների հիմքում: Թե չէ՝ ի՞նչ է ստացվում. մենք ուժգին հարձակում ձեռնարկեցինք գործող արտադրական հարաբերությունների ամրոցների վրա և մեծ հաջողությամբ քանդեցինք նրա ինստիտուտները: Դրանով ժողովուրդը իր գործը ավարտած համարելով, հրապարակներից վերադարձավ տուն, իսկ շարժման առաջնորդները տեղափոխվեցին պալատներն ու ամառանոցները:

Հետո սկսեցինք դժգոհել խորհրդարանի աշխատանքից, հանրապետության նախագահից, կառավարությունից: Քննադատության թիրախ դարձան նաև արհմիությունները: Իմ համոզմամբ, այն աղբյուրը, որից պետք է խմենք, զորանանք, դա սոցիալական շարժումն է, արհմիությունները՝ սոցիալական շարժման պրոտուը: Չկա ծառը, պտուղ որտեղի՞ց:

Ժողովրդավարական երկրներում պետական մարմինների կատարելագործման, պետության զարգացման ու կայունացման երաշխիքը սոցիալական շարժումն է: Այն բնորոշ է ազգային պետականություն ունեցող ժողովուրդների համար: Դարեր ի վեր մենք եղել ենք օտար լծի տակ և ցանկացած սոցիալական բողոք, դժգոհություն, որը սոցիալական պայքարի շարժիչ ուժը է, ուղղվել է օտարի լծի դեմ և անմիջապես վերաճել ազգային ազատագրականի: Այդպես էր նաև անցած տարիների հուժկու ժողովրդական շարժումը մեր հանրապետությունում: Հայ ժողովուրդը չունի սոցիալական շարժման պատմական փորձ, հետևաբար չի ունեցել ու չէր էլ կարող ունենալ այդ շարժման ինստիտուտները:

Հիմա մենք ուզում ենք նստել մեր տներում, զրուցել, բամբասել, դժգոհել մեր գործընկերների հետ, բավարարվել սոսկ քննադատելով, բայց ծառն ինքն իրեն ծաղիկ ու պտուղ տա: Այդպես չի լինում: Առանց սոցիալական շարժման, որի ուղղորդող, կազմակերպող հիմնական ուժերը արհմիություններն են, պետությունը չի կայանա: Միայն այդ շարժումը կարող է ծնել և իր բուրայում թրծել բանիմաց ու գործունյա պետական գործիչներ:

Գաղտնիք չէ, որ շատ հիմնահարցեր մեր խորհրդարանը կամ չի քննարկում, կամ քննարկում է, բայց չի լուծում: Օրինակ, անցյալ տարվա նոյեմբերին «Միաբանություն» արհմիության համագումարը դիմեց ՀՀ Գերագույն խորհրդին, պահանջելով հանրապետությունում մտցնել կուպոնային համակարգ: Ակն մերժվեց, մինչդեռ այսօր բոլորը համոզվել են այդ պահանջի իրավացիության մեջ: Խորհրդարանը մերժեց, արհմիությունները ձայն չհանեցին, իսկ արդյունքում տուժեց ժողովուրդը:

Արցախում և սահմանամերձ շրջաններում շարունակվող պատերազմը ժողովրդին զրկում է լռելյան տանելու բոլոր տառապանքները: Սակայն հասկանալի է, որ այն անվերջ լինել չի կարող: Վրա կհասնի տարիներով կուտակվածը դուրս հորդելու ժամանակը: Հասունացող սոցիալական պայթյունը աղետալի հետևանքներ կունենա հանրապետության համար: Եթե դժգոհության դաշտը ժամանակին չականազերծվի և պայթյունը, այնուամենայնիվ, կայանա, մեղավոր կլինենք բոլորս՝ իշխանությունները, որ չեն լուծում կուտակված կնճռոտ հիմնահարցերը, և մենք, որ չենք պահանջում նրանցից, ինչպես հարկն է: Իշխանությունների վարած սոցիալ-տնտեսական քաղաքականությունը առայժմ ոչ մի արդյունք չի տալիս, բացի այն, որ մեծանում է ռեֆորմների տապալման հավանականությունը: Բանն այն է, որ ռեֆորմների հաջողությունը կանխորոշող ամենաշահագրգիռ սոցիալական շերտը՝ տեխնիկական մտավորականությունը, հայտնվել է ծանրը, անելանելի կացության մեջ: Գիտության շատ նվիրյալներ կյանքի պարտադրանքով գնում են առևտրի, սպասարկման բնագավառներ կամ հեռանում հայրենիքից: Իշխանությունների և տեխնիկական մտավորականության միջև առաջացող անջրպետը վտանգավոր չափեր է ընդունում: Ի՞նչ է մեզ սպասում վաղը՝ դժվար է գուշակել: Սակայն պարզ է մի բան՝ սոցիալական շարժման վերընթացը անխուսափելի է, և մեր հույժ կարևոր անելիքը այն ափերի մեջ պահելն է: